ՎԱՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հարությունյան Արփինե

Հանգուցային բառեր՝ *կրթություն, վաղ ուսուցում, մինչդպրոցական տարիք, դպրոց, մանկություն, կենսագործունեություն, հոգեկան գործընթաց*

Վաղ կրթության հիմնախնդիրն այսօր արդիական է ամբողջ աշխարհում: Սակայն յուրաքանչյուր տարածաշրջանում վաղ կրթությունը կազմակերպվում է տարբեր նպատակներով և դրանով պայմանավորված՝ զանազան կազմակերպական ձևերով:

Վաղ կրթության նպատակն է. «հոգեբանորեն և գործնականորեն նախապատրաստել երեխաներին դպրոցական ուսուցմանը: Սակայն ընտելացնել սովորելուն անհրաժեշտ է աստիճանաբար, խաղերը չփոխարինելով դրանով, այլ քիչ-քիչ կրճատել խաղային գործունեությունը և ավելացնել սովորելու ժամանակը, որը պետք է կրի խաղային բնույթ: Երեխաները դպրոց ընդունվելիս չպետք է զգան մեկ ռեժիմից կտրուկ անցում մյուսին, այդ անցումը պետք լինի շատ բնական» [4]:

Վաղ ուսուցման կազմակերպման համար հիմք են հանդիսացել հետևյալ մոտեցումները: Դրանցից են՝

- նախապատրաստում դպրոցական ուսուցման, որը կազմակերպվում է թե՛ նախադպրոցական կրթական հաստատություններում, թե՛ դպրոցներում,
- մանկության կազմակերպում նախադպրոցական տարաբնույթ կրթական հաստատություններում՝ ինչպես պետության կողմից հաստատված, այնպես էլ անհատական կամ հեղինակային ծրագրերով:

Անհրաժեշտ է նշել, որ թեև վաղ ուսուցման կազմակերպումը պարզապես մեկնարկվեց 21-րդ դարասկզբին, սակայն մեր հանրապետությունում այդ ուղղությամբ աշխատանքներ և գիտափորձեր կազմակերպվել են դեռևս 20-րդ դարի յոթանասունական թվականներին: Միաժամանակ պետք է չմոռանալ, որ աշխարհի բազմաթիվ առաջադեմ երկրներում վաղ տարիքի երեխաների հետ կազմակերպված կրթական գործընթացներ են իրականացվել դեռևս նախորդ դարերում. հիշենք մանուկների հետ տնային ուսուցումը կազմակերպողները, որոնք ապահովում էին երեխաների բազմակողմանի զարգացումը:

Վաղ ուսուցման հիմնահարցը Հայաստանում ևս ունի տասնյակ տարիների պատմություն՝ չնայած այն բանին, որ ժամանակ առ ժամանակ այն ընդհատվել է՝ պայմանավորված երկրում առկա տնտեսական, քաղաքական և մանկավարժահոգեբանական մի շարք գործոններով:

Ողջ աշխարհում վաղ կրթության անհրաժեշտությունը հիմնավորվել է ինչպես սոցիալական, այնպես էլ մանկավարժահոգեբանական տեսանկյուններով: Այն *առաջին* հերթին հիմնավորվում է մատաղ սերնդի կրթության նկատմամբ կառավարման մարմինների ունեցած սկզբունքային դիրքորոշմամբ. երեխային պիտի կրթել վաղ մանկության տարիներից սկսած, քանի որ հոգեկան ու մտավոր գործընթացներն սկսվում են զարգանալ և ձևավորվել նրա ծնված օրից:

Հայ իրականության մեջ մշտապես արժևորվել է կրթության և գիտելիքի տեղն ու դերը մարդու կենսագործունեության մեջ՝ հատկապես մանկության շրջանում, ինչպես նաև այսօր արդեն անառարկելիորեն հաստատվել է այն համոզմունքը, որ անձի կրթությամբ անհրաժեշտ է զբաղվել վաղ տարիքից՝ ապահովելով կրթության շարունակականությունը տարիքային բոլոր փուլերում:

Երկրորդ. հիմնավորվում է մանկավարժների, հոգեբանների, ֆիզիոլոգների՝ գիտելիքների արդյունքների հիման վրա ձևավորված այն համոզմունքներով, որ կրթության համար ամենաարդյունավետ շրջանը վաղ տարիքն է: Այս տարիքում երեխան սպունգի նման կլանում է բարեկրթության, կենցաղավարության վերաբերյալ տեղեկույթի այն ընդարձակ պաշարը, որն իրեն անհրաժեշտ է և ամենուրեք շրջապատում է իրեն: Իսկ այդ պաշարն այսօր ոչ միայն շատացել է, այլև դարձել է բազմաբնույթ՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների, համացանցի կենցաղում օգտագործման հետ: Այսօրվա մինչդպրոցական տարիքի երեխան տիրապետում է համակարգչին և օգտվում է նրանից, ինչը հզոր տեղեկատվական դաշտ է հանդիսանում: Այդ տեսանկյունից արդեն մինչդպրոցական տարիքի երեխան գալիս է դպրոց զարգացման որոշակի մակարդակով:

Երրորդ. պայմանավորված է երեխաների հոգեկան և ֆիզիկական ոլորտների զարգացման մեջ տեղաշարժերով՝ աքսելերացիայով:

Չորրորդ. թեթևացնում է, մատչելի է դարձնում տարրական դասարանների ուսումնական ծրագրերի բովանդակության յուրացումը, որն օրըստօրե շատանում է և բարդանում գիտության, մշակույթի և հասարակական-քաղաքական հարաբերությունների շարունակական փոփոխությունների ու զարգացող շարժընթացը ծայրահեղորեն ընդհարվում են ուսումնական այն նյութի բովանդակությանը, որի իմացությունն անհրաժեշտ է ժամանակակից մարդկության՝ գիտելիքահեն այս կյանքում ապրելու համար:

Պայմանավորված նշված հանգամանքներով՝ մեկ տասնամյակից ավելի է Հայաստանի Հանրապետությունում փոխվել է հանրակրթության մեկնարկային տարիքը: Նախկին 7 տարեկանների փոխարեն այսօր դպրոցում են 6 տարեկանները, որոնց հետ իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքներն ունեն ակնառու առանձնահատկություններ:

Չնայած նրան, որ Հայաստանում այսօր արդեն գործում են բազմապիսի

նախադպրոցական կրթական հաստատություններ, դեռևս առկա է մի գերխնդիր. նախադպրոցական կրթական հաստատություններ չի հաճախում Հայաստանի երեխաների մի ստվար զանգված, ինչը մեծապես խոչընդոտում է նրանց հետագա կրթության հաջորդայնության ապահովմանը:

Այս խոչընդոտները դիմակայելու, կրթության բոլոր օղակների շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է՝

1. Բացահայտել նախադպրոցական հաստատություններ հաճախած և չհաճախած երեխաների հոգեկան գործընթացների, մտավոր կարողությունների զարգացման մակարդակների տարբերությունները.

2. Ուսումնասիրել ՀՀ պետական կրթական չափորոշչային փաստաթղթերը՝ նախադպրոցական և տարրական կրթության պետական կրթական չափորոշիչները, ծրագրերը և դրանց համեմատության համատեքստում դիտարկել կրտսեր դպրոցականների առջև դրված պահանջներն ու այդ տարիքի երեխաների հնարավորությունները.

3. Ուսումնասիրել դպրոցական կրթության առաջին օրերին գործունեության նոր ձևին հարմարեցման դժվարությունները, նրանց հոգեկան նորագոյացությունների, հաղորդակցական և համագործակցային կարողությունների, մատների մանր ֆալանգների զարգացման աստիճանը, ինքնասպասարկման և համակեցության ոլորտի ունակությունները և այլն:

Ելնելով վերոբերյալից, մեր առջև խնդիր դրեցինք պարզել, թե մանկապարտեզն ավարտած երեխաների ո՞ր մասն է ցանկանում դպրոց գնալ: Այդ նպատակով 6 տարեկան 40 երեխայի հետ իրականացրած հարցազրույցի արդյունքում պարզեցինք, որ նրանք բոլորն էլ անհամբեր սպասում են, թե երբ են առաջին անգամ դպրոց գնալու: Ուշագրավ են նախադպրոցականների՝ դպրոց հաճախելու ցանկության առաջին՝ ամենամանկական դրդապատճառները: Պարզվեց, որ դպրոց հաճախելու ցանկության դրդապատճառների մեջ ակնառու են հետևյալները. նրանց գրավում են նոր պայուսակը, նոր զգեստը, պատկերազարդ դասագրքերը, տետրերն ու մատիտները: Երեխաների հետ զրույցի ընթացքում պարզ դարձավ, որ այս ամենը նրանք ընկալում են ոչ թե որպես «սովորելու գործիքներ», այլ իբրև խաղալիքներ, բայց այս անգամ արդեն՝ մեծահասակի խաղալիքներ:

Միաժամանակ դպրոցական առաջին օրերին երեխաների վարքն ու գործունեության ձևերը վերլուծելիս բացահայտվել է, որ թեև երեխաներին գրավում են դպրոցական գունագեղ պարագաները, խաղերն ու խաղալիքները, դասընթացի հետաքրքրաշարժությունը, այնուամենայիվ, նոր՝ աշակերտի կարգավիճակը սթրեսային է նրանց համար [1, 21-35]:

Մեզ միաժամանակ հետաքրքրում էր, թե արդյոք նախադպրոցական տարիքում երեխայի ձեռք բերած գիտելիքները և կարողությունները բավարար են

դպրոցում ուսումնական գործունեություն ծավալելու համար: Մեր ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ ուսումնական գործունեության առաջին իսկ օրից ծագում են մի շարք խնդիրներ, որոնք ակնկալվող են, սակայն գործնականում՝ հաճախ դժվար լուծելի:

Նախ կարևորվում է մանկական կոլեկտիվում երեխայի պաշտպանվածության, ապահովության մթնոլորտի ստեղծումը: Այս հանգամանքը կարևորվում է, նրանով, որ ըստ մի շարք հոգեբանների՝ փոքրիկը պիտի վստահ լինի, որ դպրոցում սպասում են իրեն, որ այնտեղ իր ձայնը լսելի է, և ինքը գտնվում է իր նմանների միջավայրում ու պաշտպանված է [2]:

Օրինակ, երբ առաջին անգամ դպրոց ընդունեցինք մեր փոքրիկ սաներին, նախապատրաստվել էինք ամենայն բարեխղճությամբ. յուրաքանչյուրի համար ձևավորել էինք անվանաթերթիկներ, որոնց վրա ոչ միայն նրանց անուն-ազգանունն էր գրված, այլև փակցված էր նրանց նկարները: Նկարը մենք կարևորեցինք, ոչ միայն նրա համար, որ նրանք դեռևս կարդալ չգիտեն: Իրենց նկարը աշակերտական սեղանին տեսնելով՝ երեխաները մի տեսակ համարձակություն ձեռք բերեցին, նրանք իրենց զգացին սպասված, գնահատված. տեղի ունեցավ ինքնագնահատականի բարձրացում:

Բոլոր անվանաթերթիկները դրեցինք առանձին սեղանի վրա: Մենք աշակերտներին խնդրեցինք, որ յուրաքանչյուրը գտնի, վերցնի հենց իր անվանաթերթիկը և նստի այնտեղ, որտեղ կցանկանա: Մեզ համար այս հանձնարարության կատարման արդյունքները հետաքրքիր էին. մեզ թվում էր, թե բոլորը պետք է ցանկանային նստել առաջին նստարանին՝ մեր սեղանի առջև: Բայց պատկերը բոլորովին այլ էր: Մի մասը նստեց վերջում, մյուս մասը՝ առջևում, իսկ ոմանք էլ պարզապես մնացին մեջտեղում կանգնած: Դա մեզ բավականին ընդարձակ նյութ տվեց՝ մտածելու նրանցից յուրաքանչյուրի ինքնատիպության և անձնային որակների տարբերության մասին:

Այսպես յուրաքանչյուրը տեղավորվեց իր ընտրած նստարանին: Մեզ հետաքրքրում էր նաև, թե դասարանում ինչպիսի մթնոլորտ է տիրում, ինչ արժեքներ ունեն մեր առաջին դասարանցիները, ինչն է ամենաթանկը նրանց համար, ինչպես են նրանք հաղորդակցվում իրենց դասընկերների հետ և այլն:

Աշակերտներից յուրաքանչյուրին տվեցինք թղթից պատրաստված գունավոր ձեռքեր: Հանձնարարվեց դրանց վրա նկարել իրենց համար ամենաթանկ մարդկանց:

Հանձնարարության կատարման ընթացքի վերլուծությունից պարզ դարձավ, որ նրանց նկարների հիմնական թեման ընտանիքն էր, ընկերությունը, հայրենիքը:

Մեզ համար կարևոր էր նաև պարզել, թե ինչպիսի երեխաների հետ ենք աշխատելու, ովքե՞ր են ուզում խաղալ, ովքե՞ր են ցանկանում սովորել և այլն:

Այդ նպատակով առանձնացրեցինք երկու տարբեր սեղաններ: Առաջին սեղանի վրա դրեցինք գրենական պիտույքներ, երկրորդի վրա՝ նախադպրոցական տարիքի երեխային հետաքրքրող խաղալիքներ: Դասամիջոցին յուրաքանչյուր երեխա մոտեցավ և վերցրեց այն պարագան, որն իրեն ավելի հոգեհարազատ էր, այսինքն՝ յուրաքանչյուրը վերցրեց մի պարագա, որը համապատասխանում էր իր ճանաչողական հետաքրքրություններին: Արդյունքն անսպասելի էր. նրանք, որոնք տարիքով կամ ամիսներով իրենց տարեկիցներից մեծ էին, նախընտրությունը տվեցին գրենական պիտույքներին, իսկ խաղալիքներ ընտրել էին ավելի փոքրերը:

Մենք ուսումնասիրեցինք այս երկու խմբերի աշակերտների անձնական գործերը: Բացահայտեցինք, օրինակ՝ որ խաղալիքներ ընտրել էին 40 երեխայից 21-ը: Նրանցից 18-ը մանկապարտեզ էին գնացել, գրենական պիտույքները ընտրած 19 երեխաներից 14-ը հաճախել էր մանկապարտեզ:

Մեր մանկավարժական պրակտիկայում ականատեսն ենք եղել, թե երեխաների մի մասն ուսումնական տարվա առաջին օրերին ինչպիսի դժվարությունների առջև են կանգնում՝ պատրաստ չլինելով դպրոցական ուսումնական գործունեության: Այս հիմնախնդիրը առավել ակնառու է դարձել՝ պայմանավորված կրթության մեկնարկային տարիքի իջեցմամբ: Մեր կարծիքով, երեխաների ուսումնական հաջողություններն առաջին դասարանում մեծապես պայմանավորված են նրանով, թե արդյոք երեխան հաճախել է նախադպրոցական հաստատություն և ծնողներն ինչպես են վերաբերվում իրենց երեխաների դպրոցական ուսուցմանը պատրաստ լինելու հանգամանքին:

Իսկ ինչ է նշանակում «երեխան պատրաստ է ուսումնական գործունեության», ինչպիսի բնութագրիչներ պիտի ունենա երեխան, որպեսզի համոզվենք, որ 6 տարեկանը պատրաստ է դպրոցին:

Նշված հիմնախնդրի շուրջ մենք անկետային հարցումներ անցկացրեցինք ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցի առաջին դասարանցի երեխա ունեցող 75 ծնողի շրջանում:

Հարցաթերթիկի առաջին հարցին՝ «Իմ երեխան, կարծում եմ, պատրաստ է դպրոցին, որովհետև...», հարցմանը մասնակցած 75 ծնողներից 68-ի (90%) կարծիքով իրենց երեխաները հիմնականում պատրաստ են դպրոցին: Այդ պատասխանները գրելիս նրանք հաշվի էին առել մեր ներկայացրած՝ երեխայի դպրոցին նախապատրաստվածության մակարդակների բնութագրիչները:

Հարցերի պատասխանները ցույց տվեցին, որ ոչ միշտ են ծնողների պատկերացումները համապատասխանում դպրոցին պատրաստ լինելու ընդհանուր բնութագրիչներին:

Երկրորդ հարցին՝ «Իմ երեխան պատրաստ չէ դպրոցին, որովհետև...» հարցման ծնողների տված պատասխանները միանշանակ չէին և հաճախ հա-

կասում էին 1-ին հարցին տված պատասխաններին: Այս փաստը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ ծնողների մի մասը (40%) ըստ ամենայնի չի պատկերացնում, թե ինչ է նշանակում պատրաստ չլինել դպրոցին:

Հարցմանը մասնակից ծնողների 30% որպես դպրոցին նախապատրաստվածության ցուցանիշ նշել է «տառերը չի ճանաչում» պատասխանը:

Երրորդ հարցին՝ «Իմ երեխան ունի՝...» հարցի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն եզրակացությանը, որ հարցմանը մասնակից 75 ծնողներից 66-ը (88%) իրենց երեխաների համար տանը ունեն առանձնասենյակ: Այս հարցի առնչությամբ կար ևս մեկ հետաքրքիր փաստ, որ ծնողների 70%-ը կարևոր էր համարել տանը երեխայի համար խաղալիքների անկյունի առանձնացումը:

Չորրորդ հարցին՝ «Ընդգծել այն բառերը, որոնք կգործածեիք Ձեր երեխային բնութագրելիս» ծնողների 40%-ը իրենց երեխաներին բնութագրելիս ընտրել էր հետևյալ բառերը՝ ուշադիր, աշխատասեր, շնորհալի, աշխույժ:

30%-ը իրենց երեխաներին բնութագրելիս ընտրել էր հետևյալները՝ անուշադիր, ամաչկոտ, հարմարվող, խռովկան, լուրջ: Մյուս 30%-ը՝ շնորհալի, շատախոս, ակտիվ, անուշադիր:

Հինգերորդ հարցին՝ «Իմ երեխան...»

- Սիրում է խաղալ ընկերների հետ – 66%
- Նախընտրում է մենակ խաղալ – 2.6%
- Անարդարությունը չի հանդուրժում – 52%
- Սիրում է խաղի ժամանակ ղեկավար դեր ստանձնել – 25%
- Չի հանդուրժում, երբ պարտվում է – 36%
- Չի սիրում աչքի ընկներել – 9.3%
- Ֆիզիկապես ուժեղ է – 21.3%

Ծնողներից 3-ը նշել են, որ իրենց երեխաները խաղի մեջ սիրում են լինել առաջատարի, լիդերի դերում:

Վեցերորդ հարցը՝ «Երեխան հաճախել է...».

- Մանկապարտեզ – 65%
- Կրթական այլ հաստատություն – 28%
- Որևէ հաստատություն չի հաճախել – 5%
- Նրանով զբաղվել է ծնողը – 2%

Այս հարցը այն առանձնահատուկ հարցերից էր, որի ուսումնասիրությունը, (ինչպես երրորդ հարցը) թույլ կտա ուսուցչին հետագա գործունեությունը արդյունավետ իրականացնել:

Յոթերորդ հարցին, թե ծնողներից ով է աշխատում, պարզեցինք, որ աշխատում են

- մայրիկների – 21%
- հայրիկների – 50%

▪ և՛ հայրիկը, և՛ մայրիկը – 50%

Այսպիսով, հարցումների արդյունքում բացահայտվեց վաղ ուսուցման գործընթացի մեջ ընդգրկված երեխաների դպրոցամուտին պատրաստ լինելու առանձնահատկությունները, բնութագրիչները, նրանց հոգեկան գործընթացների ձևավորվածության մակարդակները, ուսուցչի առջև ծառացած խնդիրները, որոնք պետք է հաշվի առնել դպրոցամուտին երեխայի հարմարման և, ընդհանրապես, վաղ ուսուցման կազմակերպման գործընթացում:

Միևնույն ժամանակ, հարցաթերթիկի պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ ծնողներին անհրաժեշտ է մանկավարժական աջակցություն երեխային վաղ ուսուցմանը և դպրոցամուտին նախապատրաստելու համար:

Այս տեսանկյունից մենք կարծում ենք, որ շատ արդարացի է Ռ.Ե.Գերասիմովայի այն կարծիքը, որ. «ուսուցման և դպրոցական կյանքին պատրաստության ձևավորումը երեխայի հոգեբանական, ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական զարգացման այնպիսի մակարդակի ձեռբերում է, որը թույլ կտա նրան հաջողությամբ սովորելու և գործելու դպրոցական կոլեկտիվում» [3, 4]:

Գրականություն

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., Զանգակ, 2018:
2. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ, Եր., Լինգվա, 2009:
3. Герасимова Р. Е., Автореферат диссертации, «Педагогические условия обеспечения единой системы дошкольного и начального образования: На примере обучения математике», 2001.
4. Тарунтаева Т. В., Развитие элементарных математических представлений у дошкольников.- М., 1980.- 63 с.

ПРОБЛЕМА ОРГАНИЗАЦИИ РАННЕГО ОБРАЗОВАНИЯ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Арутюнян Арпине

Резюме

Ключевые слова: *образование, раннее обучение, дошкольный возраст, школа, детство, жизнедеятельность, умственный процесс*

В статье рассматривается проблема организации раннего обучения детей.

Обосновано, что проблема раннего обучения актуальна сегодня во всем мире. Но в каждом регионе раннее образование организовано для различных целей различными организационными формами. Постоянно внедряются инновационные подходы в области раннего образования.

Они в основном следующие:

- Подготовление к школьному образованию, которое организуется как в дошкольных образовательных учреждениях, так и в школах,
- Организация детства в дошкольных различных образовательных учреждениях, как программами, установленными государством, так и личными.

Проблема раннего образования в Армении также имеет многолетнюю историю, несмотря на то, что она время от времени прерывалась из-за ряда экономических, политических, педагогических и психологических факторов в развитии страны.

В армянской реальности всегда ценились место и роль образования в жизни человека, особенно в детстском возрасте, и сегодня также неоспоримо утверждение, что образованием личности необходимо заниматься с самого раннего возраста, чтобы обеспечить непрерывность образования на всех возрастных этапах.

В результате проведенных социальных опросов представлены особенности детей, вовлеченных в процесс раннего обучения, а также уровни их психических процессов: эмоциональных, образовательных мотиваций, интересов.

THE PROBLEM OF EARLY EDUCATION ORGANIZATION IN PRIMARY SCHOOL

Harutyunyan Arpine

Summary

Key words: *education, early education, pre-school age, school, childhood, livelihood, mental process*

The article considers the issue of organizing the education of children of pre-school age.

It is based on the fact that the problem of early learning is urgent today in the world. However, the education of each region is organized for different purposes and is conditioned by the diversity of organization. Based on these approaches, innovative approaches are constantly being implemented in the field of early education.

These are mainly the following:

- preparation of school education, organized both in pre-school institutions and in schools,
- Organization of childhood care in pre-school institutions, both state-approved and individual.

The problem of early learning in Armenia has a history of decades, even though it has occasionally been interrupted by a number of economic, political and pedagogical-psychological factors from time to time.

In the Armenian reality, the place and role of education and knowledge has always been valued in the life of the person, especially in childhood, and nowadays it is undeniable that the belief that a person's education is farewell to expect from an early age to ensure continuity of education at all stages.

The peculiarities of the children involved in the early learning process have been revealed as a result of social surveys and the levels of interest in their mental processes, mentality, emotional motivation.